



2015 թվականի մարտի 14-ին, Թբիլիսիի Սուրբ Էջնիածին եկեղեցու նատավայրում կայացավ Կրաստանի խայերեն ուսուցմամբ խանրային դարոցների ղեկավարների խանղիայումը Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորի Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի հետ: Հանղիպմանը մասնակցում էին Մառնեուլի շրջանի Միրզոնկա, Չանախչի, Շահումյանի թիվ մեկ և թիվ 3, Բոլնիսի շրջանի Բոլնիս-Խաչենի և Կիանեթի, Թեթրիժղարոյի շրջանի Սամշվիլեի, ինչպես նաև քաղաքամայր Թբիլիսիի թիվ 103 և 104 խանրային դարոցների տնօրենները և ուսմասվարները: Հանղիպմանը ներկա էր նաև Վիրահայոց թեմի կրթության բաժնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը:

Ողջունելով ներկաներին, Թեմակալ առաջնորդը հետաքրքրվեց մայրաքաղաքում և իայաբնակ վայրերում խայերեն ուսուցմամբ դարոցներում աշակերտության թվաքանակի, դասագրքերի, ծրագրերի, առարկայական մասնագետներով ապահովության և այլ հարցերով:

Հանղիպմանը ներկա ղեկավարներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր ղեկավարած

կրթօջախում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների դրվածքը, խոսեց դասագրքերի, ծրագրերի շուրջ, արժևորեց կրթության բնագավառի նկատմամբ ցուցաբերվող ուշադրությունը ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունների և ռեսուրս-կենտրոնների կողմից:

Ամփոփելով հանդիպումը, թեմակալ առաջնորդը աշխատանքների բարելավման և կատարելագործման լծակ անվանեց ամեն տարի ՀՀ Կրթության և գիտության և Սփյուռքի նախարարությունների կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացները և հորդորեց ներկաներին անպայման իրենց ղեկավարած կրթօջախների ուսուցիչներին մասնակից դարձնել այդ դասընթացներին, որոնք նպաստում են ժամանակի ոգուն համահունչ սերունդ դաստիարակելուն: Սրբազան հայրը անդրադարձ կատարեց Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին Մայր Հայրենիքում և Սփյուռքում անցկացվող միջոցառումներին և կրթօջախների ղեկավարներին առաջարկեց իրենց դպրոցներում անցկացնել ոգեկոչման տարբեր միջոցառումներ:

Վազգեն Սրբազանը պատրաստակամություն հայտնեց սերունդների կրթության և դաստիարակության ասպարեզում առկա խնդիրները լուծելու գործում: